ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ՎԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ *ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՉ ՍՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԴԵՐԱՅԻՆ ԽԱՂ ՄԵԹՈԴՈՎ*

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ *ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՄՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ*

ՈՒՍՈՒՑԻՉ՝ *ՔՆԱՐԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ*

ԴՊՐՈՑ՝ *ԼՌՔԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ*

Ք.ՄԱՐՏՈՒՆԻ 2022Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն----------3
2. Գրական ակնարկ----------4
3. Փորձարարական հետազոտություն----------6
4. Խմբի նկարագիրը----------7
5. Փորձարարական դաս 1----------8
6. Փորձարարական դաս 2----------9
7. Եզրակացություն----------13
8. Դասապլան 1----------14
9. Դասապլան 2----------16
10. Դասապլան 3----------18
11. Օգտագործված գրականության ցանկ----------19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօրվա դպրոցը կանգնած է բազում ու բազմաթիվ մեծ ու փոքր խնդիրների առաջ: Փոխվել են կարելիի ու չի կարելիի սահմանները, դպրոցի և ընտանիքի շփման տիրույթներն ու փոխհարաբերությունները, ուսուցչի և աշակերտի իրավունքներն ու պարտականությունները: Վերջապես կյանքն է փոխվել, և պահանջը դպրոցի նկատմամբ:

Հանրակրթական պետական առարկայական չափորոշիչներով հստակեցվել են դպրոցին ներկայացվող կրթադաստիարակչական պահանջները: Ուսուցչի պահանջները հլու-հնազանդ կատարող աշակերտն այլևս չկա, և աշակերտի այդ տեսակը չի էլ խրախուսվում:

Այսօր խոսում ենք ավանդական և ժամանակակից դասի մասին, ինչպես նաև ուսուցման ժամանակակից մեթոդների մասին, այսինքն դաս-դասարան, ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններն անընդհատ ենթակա են նորացման ու փոփոխության, թեև ուսումնասիրությունները ցույց են տվել, որ սա կյանքի ամենապահպանողական ոլորտն է: Ինչպես դարեր առաջ, այսօր էլ ուսուցիչը կանգնած է դասարանի առաջ, իսկ աշակերտը նստած է իր նստարանին: Այսօրվա մարդը, այսօրվա աշակերտը չի ընդունում, չի սիրում այս ստանդարտ վիճակը, մինչդեռ դաս-դասարան, ուսուցիչ-աշակերտ շղթան ինքնին ենթադրում է ստանդարտ վիճակներ: Մեր կարծիքով նաև այս շղթայով է պայմանավորված այսօրվա աշակերտի դժվար ներգրավվածությունը դասապրոցեսին:

Նույն պարբերականությամբ, թեև տարբեր բովանդակությամբ, կրկնվող իրավիճակները ձանձրալի, բացասական, մինչև անգամ մերժողական վերաբերմունք են առաջացնում աշակերտի մոտ, և արդյունքում ունենում ենք մեծ քանակությամբ բացակայություններ: Կար ժամանակ, որ սա վերաբերվում էր միայն որոշ առարկաների և ուսուցիչների, բայց այսօր այս խնդիրը դարձել է դպրոցի առջև կանգնած ամենամեծ մարտահրավերներից մեկը:

Հասկանալի է, որ հարցը շատ խորքային է, ու միայն ուցուցիչը չէ դրա պատասխանատուն ու մեղավորը, բայց անդրադառնանք այն խնդիրներին, որոնց լուծման դեպքում ուսուցիչը որոշակի հաջողությունների կհասնի այս հարցում:

Ի՞նչ անել, որ աշակերտը դպրոց գա ոչ միայն գիտակցաբար ու պարտադրված, այլ նաև՝ հաճույքով:

Այս խնդրին շատ մանկավարժներ են անդրադարձել: Հիշատակենք նրանցից մեկին՝ գրող, մանկավարժ, մեթոդիստ, հոգեբան Լևոն Շանթին՝ անդրադառնալով նրա՝ 1952 թվականին Բեյրութում հրատակրակված «Ուսում և կրթություն դպրոցական» հոդվածում արծարծված գաղափարներին ու տեսակետներին: Շանթի ողջ մանկավարժությունը ներծծված է սիրով առ աշակերտը. «Ուսուցչի վերաբերումը

դեպի աշակերտները երկու հիմնական գաղափարի վրա կկայանա. Աշակերտ մարդ մըն է և ընկեր մը»:[1]

Ուսուցման գործընթացն ամբողջությամբ պետք է ներծծված լինի երեխայի նկատմամբ սիրով: Ամեն ինչ պետք է անել, որպիսի աշակերտը սիրով հաճախի դպրոց, սիրի իր գեղեցիկ նկարազարդված և հետաքրքիր նյութերով հարուստ դասագիրքը: Այսինքն դեռ այն ժամանակ Շանթը խոսում էր ուսումնական գործընթացը աշակերտակենտրոն դարձնելու, ուսումը աշակերտին հաճելի դարձնելու մասին: Տալիս էր հանձնարարություններ (անհատական ու խմբային) «որուն ամբողջ դասարանը կմասնակցի, միասին մտածելով, միասին դիտելով երևույթ մը և միասին փնտրելով տրված հարցերուն պատասխանը»[2]:

Դպրոցում ամեն ինչ պետք է լինի աշակերտների համար և աշակերտների միջոցով:

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ինչպես արդեն ասացինք աշակերտն այնքան էլ չի սիրում ստանդարտ իրավիճակներ և դա ուսուցչին մղում է ստեղծագործական մոտեցում ցուցաբերել և «փոխզիջումների» գնալ աշակերտի հետ: Մի բան է, երբ ուսուցիչը, թեկուզև մեծ ներշնչանքով ու վարպետությամբ ներկայացնում է Չարենցի կյանքն ու ստեղծագորխությունը դասարանում, մի այլ բան է, երբ աշակերտը ՏՀՏ դասարանում տեսաֆիլմ է դիտում Չարենցի մասին, հաղորդակից լինում նրա տառապանքին, բախվում մարդկային անարդարությանը:

Դասի ընթացքում աննկատ հետևում եմ յուրաքանչյուր աշակետի դեմքի արտահայտությանը: Այլևս չկան այն անտարբեր ու անհոգ տղաները, որոնց համար «գործը» դասից կարևոր է: Ուշիուշով ու լարված դիտում են տեսաֆիլմը: տիրում է բազմանշանակ լռություն, հետո շտապում են հարցեր տալ իրենց տեսածի ու լսածի մասին, հետաքրքրվում են, թե ինչպես կարելի է գտնել ու Չարենց կարդալ, թե այլ հեղինակների մասին ևս չկա՞ն այսպիսի ֆիլմեր: Սա նշանակում է, որ աշակեկրտներին դասապրոցեսին ներգրավելու համար կարելի է դիմել ՏՀՏ-ների օգնությանը:

Ոչ ստանդարտ իրավիճակ կարելի է ստեղծել դասարանում դերային մեթոդի կիրառմամբ, որը շատ կենսունակ մեթոդ է բոլոր ժամանակներում:

Սա հաճախակի կիրառվող և շատ վաղուց կիրառվող մեթոդ է:

---

[1] Լևոն Շանթ «Ուսում ու կրթութիւն դպրոցական», Համազգային ընկերության, տպարան, Պեյրութ 1952թ., էջ՝ 43

[2] Նույն տեղը՝ էջ 48

Ոմանք այն համարում են ուսման ձև ոչ թե մեթոդ, բայց այն համապատասխանում է մեթոդին ներկայացվող բոլոր պահանջներին, որոնք ներկայացված ենհայտնի գիտնականների սահմանումներում:

«Ուսուցման մեթոդն ուսուցման այնպիսի ձև է, որը կիրառվում է պարբերաբար և մեծ ազդեցություն է թողնում մանկավարժական աշխատանքի ամբողջական ուղղվածության վրա»:[3]

«Ուսուցման մեթոդը ուսուցչի և աշակերտների հետևողական փոխկապակցված գործողությունների համակարգն է, որն ապահովում է կրթության բովանդակության յուրացումը»:[4]

Դերային մեթոդի հնարավորությունները շատ մեծ են: Այն կարող է աշակերտի մեջ միանգամից շատ կարողունակություններ զարգացնել.

1. Գեղեցիկ ու արտահայտիչ խոսքի ունակություն
2. Ասածը տեսնելու և տեսանելի դարձնելու ունակություն
3. Թեմային համապատասխան միջավայր՝ դեկորացիաներ, հագուստ ստեղծելու կարողունակություն և հմտություն
4. Նկարչական և երաժշտական հմտություններ
5. Բեմական խոսքի հմտություն, ընթերցասիրություն և գրական ճաշակ:

Սրանք այն քիչ կարողունակություններն ու հմտություններն են, որոնք աշակերտի մեջ կարող է զարգացնել դերային մեթոդը:

Այն հետաքրքիր է դարձնում դասը, դարձնում է ավելի գունագեղ ու տեսանելի: Զարգացնում է ստեղծագործական միտքը, թռիչք է տալիս աշակերտի երևակայությանը:

Հենց այս մեթոդի կիրառման ժամանակ են ի հայտ գալիս համագործակցելու, միասին աշխատելու, դիմացինին արժևորելու, ընդհանուրի մեջ ձուլվելու և միաժամանակ սեփական դեմքն ու դիմագիծն ընդգծելու հատկությունները: Աշակերտը դառնում է ստեղծագործական խմբի պտուտակը, առանց որի մեխանիզմը չի կարող աշխատել և միաժամանակ իր գույնն ու երանգն է ընդգծում տեքստում:

Ընդհանրապես դերային խաղի մեթոդն ընդունված է կիրառել տարրական և կրտսեր դպրոցում, բայց այս սահմանափակման հետ այնքան էլ համաձայն չենք: Բարձր դասարաններում՝ թ՛ե հիմնական, թ՛ե ավագ դպրոցում, անցնում ենք դրամատիկական ստեղծագործություններ (Գ.Սունդուկյան «Պեպո», Վ.Սարոյան «իմ սիրտը լեռներում է», Շիրվանզադե «Պատվի համար», Լ.Շանթ «Հին աստվածներ» և

[3] Голубков В.В., методика преподавания литературы. Москва 1962г.
[4] Скоткин М.Н., Лернер И.Я., Россиская педагогическая энциклопедия
Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան 2006թ.

այլն), որոնցից նույնպես կարելի է հատվածներ բեմադրել, եթե ցածր դասարաններում այդ մշակույթը զարգացվել է աշակերտի մեջ: Այս խաղ-դասի միջոցով վերը նշված շատ դրական ունակություններից զատ կզարգանա ճաշակ տարբերելու գրական բարձրարժեք գործը և առօրյա գռեհկաբանություններ ներկայացնող մանրապատումները:

Իսկ ի՞նչ խնդիրներ կարող է լուծել այս մեթոդի կիրառումը:

Մանկավարժական աշխատանքի փորձն ու դիտարկումները թույլ են տվել եզրակացնել, որ այն՝

1. Կարող է նպաստել աշակերտների ներգրավվածությանը դասապրոցեսին:
2. Մշակում է լեզվահաղորդակցական հմտություն:
3. Զարգացնում է աշակերտի երևակայությունը և կարդացած նյութը տեսնելու և հասկանալու կարողունակությունը:
4. Զարգացնում է ճաշակ բեմական գեղեցիկ խոսքի ու գրական ստեղծագործության նկատմամբ:
5. Ակտիվացնում է անգամ ամենապասիվ ու անտարբեր աշակերտին:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Մանկավարժական երկարատև աշխատանքի ընթացում հաճախ եմ դիմել դերային մեթոդի օգնությանը, ինչն էլ հիմք է հանդիսացել ու նպաստել արտադասարանային միջոցառումների կազմակերպմանն ու գրական ստեղծագործությունների բեմականացմանը: Երկար դիտարկումներից հետո համոզվել եմ, որ այն արդյունավետ է գործում գրեթե բոլոր դասարաններում: Աշակերտները սիրում են ոչ ստանդարտ իրավիճակներ, որոնք թուլացնում են դասապրոցեսի լարվածությունը, ստեղծում ինքնաարտահայտվելու, ստեղծագործելու լայն ասպարեզ:

Դերային մեթոդն ունի ինչպես ուսումնական, այնպես էլ դաստիարակչական և կազմակերպչական խնդիրներ լուծելու մեծ հնարավորություն:

Այդպիսի մի դիտարկում-հետազոտություն կատարել եմ վերջերս 5-րդ դասարանում: Տարիքային առումով հետաքրքիր մի շրջան, երբ երեխան մտնում է սոցիալիզացիայի 2-րդ փուլ: Սա դպրոցական կյանքի նոր շրջան է երեխայի կյանքում, երբ նախակրթարանից ու տարրական դպրոցից հետո անցնում է հիմնական դպրոց:

Այստեղ շատ բան է փոխվում երեխայի կյանքում, ինչն էլ նրան ստիպում է լարվել ու տագնապել, նույնիսկ՝ ինքնապաշտպանվել: Մինչև հիմա նա շփվում էր մեկ ուսուցչի՝ իր դասվարի հետ միայն, իսկ հիմա շփվում է տարբեր ուսուցիչների հետ, ովքեր ունեն տարբեր մոտեցումներ ու տարբեր պահանջներ: Դրանից էլ ոմանց մոտ առաջանում է անվստահություն թե՛ իրենց, թե՛ նոր ուսուցիչների նկատմամբ: Իմ

կարծիքով սա է այն հիմնական պատճառներից մեկը, որ տարրականից հետո գերազանցիկների թիվը կտրուկ սկսում է նվազել: Մյուս պատճառը կարելի է համարել ինքնագնահատականի նվազումը: Սկսում է չվստահել իր խոսքին, իր գիտելիքին: Երբեմն զգում ես, որ աշակերտը դասին պատրաստ է, որովհետև շատ սահուն ու գեղեցիկ կարդում է, բայց կարդացածը չի կարողանում վերարտադրել, հարցերին պատասխանում է լարված ու ցաքուցրիվ:

Այսինքն մենք խնդիր ունենք.

1. Շահել երեխայիվստահությունը
2. Բարձրացնել նրա ինքնագնահատականն ու ինքնավստահությունը:

Մինչև որոշակի մեթոդների կիրառությանն անցնելը գործի դրեցի հոգեբանական իմ ողջ զինանոցը, որն, իհարկե, որոշակի արդյունք տվեց, բայց միևնույնն է աշակերտներից ոմանք, որ անգամ միջինից բարձր կարողություն ունեին, չէին կարողանում հաղթահարել կաշկանդվածությունը: Ես հասկանում էի, որ սա նաև ծնողի ոչ ճիշտ մոտեցման արդյունք է, երբ ծնողը անընդհատ համեմատության մեջ է դնում երեխային ընկերների հետ՝ հաշվի չառնելով իր երեխայի ունակությունները:

Նկատեցի, որ երբ խոսում են գրական հերոսի լեզվով ավելի անկաշկանդ են դառնում, այսինքն՝ սա իմ միտքը չէ, սրանք իմ բառերը չեն, հետևաբար կարող եմ խոսել ավելի ազատ ու անկաշկանդ, ես ընդամենը դերակատար եմ:

Այս դիտարկումն ինձ հուշեց, որ խնդիրը կարելի է լուծել դերային մեթոդի օգնությամբ:

Խմբի նկարագիրը

Դիտարկումը կատարել եմ Գեղարքունիքի մարզի Լիճքի Հովի. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցի 5-րդ ա դասարանում: Դասարանում սովորում են 32 աշակերտ՝ 13 տղա և 19 աղջիկ: Դասարանը միջինից բարձր առաջադիմություն ունի: Խիստ ընդգծված հետ մնացող աշակերտներ գրեթե չկան: Կան շատ ակտիվ ու աշխատասեր աշակերտներ, ովքեր չեն բավարարվում իմ տված առաջադրանքներով, պրպտում և համացանցում գտնում են համապատասխան նյութեր, գրական ստեղծագործություններ, որոնք մենք օգտագործում ենք արտադասարանային ընթերցանության ժամերին:

Մի խոսքով, ակտիվ դասարան է և պետք է պահպանել այդ ակտիվությունը, ճիշտ հուն մղել այն:

Փորձարարական դաս 1

Անցնում էինք Ռեդյարդ Քիփլինգի «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» պատմվածքը: Հետաքրքիր ու նկարագրդ մի դաս, որ գրավեց երեխաներին:

Մեթոդական գրականության մեջ խոսվում է դերային խաղի մասին, որը նշանակում է ստեղծված, հորինված իրավիճակի թատերայնացում և կիրառելի է տարբեր առարկաների ժամերին, իսկ գրականության և մայրենիի ժամերին դա կարող է լինել այս կամ այն գրական ստեղծագործության բեմականացում, ինչը որ եղավ մեր պարագայում: Սա գործնական աշխատանքի տեսակ է, որին երեխաներն ավելի հաճույքով մասնակցեցին: Որոշումն իրենցն էր, բայց, որպեսզի այն չվերածվեր զվարճալի ժամանցի և ծառայեր նպատակին, այն է՝

- Զարգացներ աշակերտի իմացական գործընթացները՝ մտածողություն, երևակայություն, ուշադրություն, հուզակամային ոլորտը՝ հույզեր, զգացմունքներ և ստեղծագործելու կարողունակություններ
- Զարգացներ աշակերտի հնարամտությունը, պայմանական իրավիճակներում (բեմական) արտահայտվելու հմտություն:
- Ձևավորեր իր և ընկերների գործունեությունը գնահատելու կարողություն:
- Զարգացներ անհատապես և խմբով աշխատելու կարողունակությունը, միմյանց կարծիքը հարգելու, փոխօգնություն ցուցաբերելու պատրաստակամությունը:

Անցանք դերախաղի բոլոր փուլերով:

Մեր առաջին փորձարարական դասը եղավ նախապատրաստման փուլը: Ստորև բերում եմ այդ դասի ամբողջական նկարագիրը:

Դասի կազմակերպչական մասը-2-3 րոպե, ողջույն, ներկա-բացակա:

Խթանման փուլում 3-5 րոպե տևողությամբ մտագրոհ եմ անցկացնում նամակ բառով և ամփոփում եմ աշակերտների ունեցած նախնական գիտելիքները նամակի մասին հետևյալ հարցադրումներով.

1. Ի՞նչ գիտեք նամակի մասին
2. Նամակի «անցած ճանապարհը»
3. Նամակի յուրահատուկ տեսակի՝ գործվածքի, դիպակի վրա, ո՞ր ստեղծագործության՝ հեքիաթի մեջ եք հանդիպել
4. Ապա 5-7 րոպե անդրադառնում ենք տնային հանձնարարությանը

Իրար հերթ չտալով՝ պատմում են Քիփլինգի մասին: Վերջապես գտել են իրենց այնքան սիրելի հերոսի՝ Մաուգլիի հեղինակին: Ամբողջ աշխատանքը կատարել են համացանցից: Աշակերտուհիներից մեկը՝ ամենապրպտողն ու հետաքրքրասերը՝

Նարեն, ընդհանրություն է գտել Քիփլինգի և Անտուան դը Սենտ Էքզյուպերիի միջև. երկուսն էլ զինվորական են, մեկը՝ թղթակից, մյուսը՝ օդաչու:

Սմբատը շարունակում է նրա միտքը.

-Փոքրիկ իշխանն ու Թաֆֆին էլ սովորական մարդ չեն ու սովորակն աշխարհից չեն:

Նկատում եմ, որ դասարանում արտասովոր ակտիվություն կա: Ես դա չեմ թաքցնում երեխաներից և ստանում եմ պատասխանը.

-Դուք մեզ խոստացել եք, որ բեմադրելու ենք պատմվածքը:

Անցնում ենք պատմվածքի ընթերցանությանը:

20 րոպե, իրար լրացնելով, ընթերցում են պատմվածքը, բացատրում անծանոթ բառերը:

Դասի ավարտի 5 րոպե անդրադարձ ենք կատարում.

1. Լա՞վն էր պատմվածքը:
2. Ձեր կարծիքով ինչի՞ մասին էր այն:
3. Ի՞նչ նոր բառեր սովորեցինք:
4. Ի՞նչ խորհուրդ կտայիք Թաֆֆիին:

Տնային հանձնարարությունը տևում է 3 րոպե:

1. Կատարել բառային աշխատանքը
2. Տեքստից դուրս գրել կոչականները:

Դասից հետո գրառումներ եմ կատարում ինձ համար:

Դասի ուժեղ կողմերը.

1. Աշակերտների մեծ ակտիվություն կար
2. Շատ նյութեր էին հավաքել հեղինակի մասին
3. Հարցադրումները ճիշտ էի ընտրել, կարողացան հիշել Աղայանի «Անահիտ» հեքիաթից Վաչագանի նամակը Անահիտին
4. Հասա իմ նպատակին, իրագործվեցին դասի վերջնարդյունքները:

Դասի թույլ կողմերը- Ինչպես միշտ, ինչքան էլ վերահսկեմ ու ճիշտ օգտագործեմ – ամանակը, այն միշտ չի հերիքում:

Փորձարարական դաս 2

Սա արդեն թեմայի երկրորդ-երրորդ դասն է և շատ հարմար էոր այսօրվա դասն իննսուն րոպե տևողություն ունի:

Դասի թեման դարձյալ Քիփլինգի «Թե ինչպես գրվեց առաջին նամակը» պատմվածքն է, և կոչականն ու նրա կետադրությունը:

Այս անգամ երեխաներն ավելի մանրակրկիտ են պատրաստվել դասին, որովհետև անհամբեր սպասում են բեմադրությանը:

Բերել են ստվարաթուղթ, ջրաներկ, մարկերներ, կպչուն թղթեր և այլ իրեր, որոնցով իրենք պետք է ձևավորեն բեմը իբրև նախամարդու բնակավայր:

Դասի կազմակերպչական մասը՝ ողջույն, ներկա-բացակա- 3 րոպե:

Դասի սկիզբ-5-7 րոպե անդրադառնում ենք տնային աշխատանքին:

Այս դասին նպատակահարմար եմ գտել աշխատել կենտրոններով: Այսպես ժամանակ կշահեմ և ավելի ճիշտ կուղղորդեմ երեխաների աշխատանքը: Փոքրիկ վահանակների վրա նախօրոք գրված են կենտրոնների անունները:

- Հետզոտողների կենտրոն
- Դերասանական կենտրոն
- Հեղինակ-սցենարիստների կենտրոն
- Նկարիչ-ձևավորողների կենտրոն
- Երաժշտական ձևավորողների կենտրոն
- Հագուստների ստեղծման կենտրոն-արհեստանոց
- Թատերագետ-քննադատների կենտրոն:

Աշակերտներն իրենք են ընտրում, թե որ կենտրոնում պիտի աշխատեն՝ ելնելով իրենց նախասիրություններից: Ես միայն ուղղորդում եմ, երբեմն էլ խորհուրդ տալիս, բայց ոչ երբեք պարտադրում, եթե անգամ աշակերտն իր ունակություններին ոչ համապատասխան ընտրություն է կատարել, թույլ եմ տալիս, որ նա մի այլ բնագավառում ևս իրեն փորձի:

Այս աշխատանքի համար օգտագործվում է 6-7 րոպե, երբ կենտրոններն արդեն ձևավորված են, սկսում են աշխատել:

Հետևում եմ նրանց աշխատանքին, մոտենում կենտրոններին, աշխատելով չմիջամտել, եթե դրա խիստ անհրաժեշտությունը չկա:

Այս աշխատանքին տրամադրում ենք 20-25 րոպե:

Միասնական քննարկումից ու բուռն վեճերից հետո հաջողվել է ավարտել դերաբաժանումը.

Հայրը՝ Թեգումայ-Արամե, որովհետև նա դասարանի ամենալուրջ տղան է

Աղջիկը՝ Թաֆֆի-Մանե, որովհետև թմբլիկ է:

Այսինքն դերաբաշխման ժամանակ միայն դերասանի ցանկությունը չէ, որ հաշվիեն առնում: Դեարասանները լուրջ փորձաքննություն են անցնում:

Հեղինակ սցենարիստներն առանձնացնում են հերոսների խոսքերը:

Ովքեր վերջացնում են աշխատանքը, օգնության են հասնում հագուստներ պատրաստողներին: 20 րոպե տևող աշխատանքն ավարտվում է հաջողությամբ: Արդյունքում ստացվում են գունագեղ ու հետաքրքիր հագուստներ, գեղեցիկ տեսարաններ:

Մնացած 10 րոպեն տրամադրում ենք կոչականին: Սահմանում ենք կոչականը, ապա տեքստից գտնում ենք կոչական պարունակող հատվածները և արդեն զգեստավորված հերոսները բեմադրում են դրանք:

Դասամիջոցին բարձրանում ենք դահլիճ, որտեղ էլ բեմի վրա ներկայացնում են պատմվածքը: Անգամ համապատասխան երաժշտություն են ընտրել:

Ներկայացումը տևում է 20-25 րոպե, ապա ավարտից հետո սկսում են քննարկել, թե իրենց մոտ ինչը ստացվեց, ինչը չստացվեց, ինչու չստացվեց:

Թատերագետ քննադատները շատ լուրջ գործի են անցնում: Նրանց աչքից ոչինչ չէր վրիպել, ոչ մի սխալ արտասանված բառ, ոչ մի սխալ շեշտադրություն, ոչ մի սխալ միմիկա կամ շարժում: Քննարկմանը դասապլանով նախատեսված է 10 րոպե և ինձ հաջողվում է ժամանակին արգելակել ու անցնել հաջորդ քայլին:

Անդրադարձի ժամանակ օգտագործում եմ Մաձև աղյուսակը:

Ինչ իմացանք	Ինչ պարզեցինք	Ինչ սովորեցինք
• Թե ով է Քիփլինգը • Նամակի ստեղծման հնարավոր և հավանական տարբերակներից մեկի մասին • Որ անհաղթահարելի դժվարություններ չկան • Որ նպատակը, եթե բարի է, արդարացնում է միջոցները	• Որ նամակի առաջացումը պայմանավորված է մարդու կարիքներով և դա կարող է գնալ հասնել պատմության խորքերը, մինչև անգամ նախամարդուն • Որ նամակը ձևափոխություններ ի ու զարգացման երկար ճանապարհ է անցել • Որ մեր մեջ կան լավ նկարիչներ,	• Գրագետ ու ճիշտ նամակ գրել • Որ նամակը պետք է գրել հայերեն ու հայատառ, որպիսի Թաֆֆիի օրը չընկնենք • Բեմից խոսել • Ինչ է կոչականը, բեմի վրա տեսանք կոչականին և երբեք չենք մոռանա, որ նրան պետք է առանձնացնենք մյուսներից

	դերասաններ, սցենարիստներ • Որ թեև տարեվերջ է, բայց մենք այդքան էլ հոգնած չենք ու պատրաստ են նոր ներկայացման	

Տնային հանձնարարությունը տևում է 3 րոպե.

1. Աշխատել դերերի վրա, անգիր սովորել
2. Պատրաստվել բեմադրության:

Այնուհետև ինքս ինձ համար եմ վերլուծում դասը և գրառումներ անում, հետագայում ևս այս մեթոդին անդրադառնալու հաստատ որոշմամբ:

Դասի ուժեղ կողմերը-

1. Իրագործվեցին դասի բոլոր նպատակները և հասա իմ նշած վերջնարդյունքին
2. Կարողացա աննկատ հունի մեջ դնել աշակերտների գերակտիվությունը
3. Կարողացա զարգացնել համագործակցային աշխատանքի հմտություններ
4. Դասն անպայման կվերածվի իսկական բեմադրության, քանի որ դրա բոլոր նախադրյալներն ունենք:

Դասի թույլ կողմերը- Այնուամենայնիվ լինում էին պահեր, որ հնարավոր չէր լինում վերահսկել աշակերտների ակտիվությունը, թեև 90 րոպե էր ժամանակը, բայց կրկին այն քիչ էր և երեխաների շատ հետաքրքիր գաղափարներ չկարողացանք իրագործել, դա էլ կմնա հաջորդ ներկայացմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր նպատակն էր պարզել դերային մեթոդի արդյունավետությունը ժամանակակից դասապրոցեսում, նրա դերը աշակերտների ներգրավվածության հարցում:

Մեր դիտարկումներից պարզեցինք.

1. Դերային մեթոդը կենսունակ է, այն կարող է աշակերտներին դասապրոցեսին ներգրավելու խթան հանդիսանալ:
2. Պետք է տարբերել դերային խաղը դերային մեթոդից:
3. Մայրենիի և գրականության ժամերին երկուսն էլ կիրառելի են, բայց տարբեր նպատակներ կարող են հետապնդել.
   - Դերային խաղի միջոցով կարելի է զարգացնել աշակերտի ստեղծագործական կարողունակությունները՝ առաջարկելով նոր լուծումներ ու վերջաբաններ տալ հայտնի ստեղծագործություններին:
   - Դերային մեթոդի միջոցով զարգացնել աշակերտի բանավոր խոսքը, խոսքի արատահայտչականությունը:
4. Դերային մեթոդը չի կարելի ամեն պահի և կամայականորեն կիրառել: Այն նպատակահարմար է կիրառել տարեվերջին, երբ երեխաները կարծես թե հոգնում են դաս-դասարան իրավիճակից և ձգտում են ավելի ոչ ստանդարտ իրավիճակների:
5. Դերային մեթոդը կիրառելիս պետք է շատ զգույշ լինել, որ այն չվերածվի խաղի, պետք է մինչև վերջ չկորցնել վերահսկողությունը և ժամանակին արգելակել:
6. Մեթոդը կարելի է կիրառել բոլոր դասարաններում, եթե հիմքը ճիշտ է դրվում: Դիտարկվող դասարանի աշակերտներն այս տարի, արդեն 6-րդ դասարանում, բեմադրեցին տարբեր հեղինակների առակներ: Յուրաքանչյուր խումբ ներկայացրեց մեկ առակագրի:

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Ք.Առաքելյան Լիճքի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	12.05.2022	Կիսամյակ	2	Դասարան	5Ա
Թեմա՝	Ռեդյարդ Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»						
Օգտագործվող նյութեր՝	Սահիկաշար Քիփլինգի մասին, 5-րդ դասարանի դասգիրք, տետրեր, մարկերներ						
Դասի նպատակը՝	1. Ծանոթացնել Քիփլինգ հեղինակին 2. Ընդգծել ճիշտ և գրագետ նամակ գրելու կարևորությունը 3. Թեման արդիականացնել 4. Օգտագործելով պատմվածքի բովանդակությունը, ներկայացնել կերպարները 5. Տեքստի երկխոսությունների միջոցով ներկայացնել կոչականը						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա 1. Ներկայացնել Քիփլինգին որպես համաշխարհային ճանաչում ունեցող հեղինակ 2. Կարդալ տեքստը սահուն, արտահայտիչ և ճիշտ շեշտադրմամբ 3. Գտնել կոչականները 4. Գրել հայերեն ու հայատառ նամակ ա)ձեռագիր բ)համացանցում						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն և Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
• Մուտք 3 րոպե • Սկիզբ 5-7 րոպե	Լսում են, ասում բառեր ու կապակցություններ կապված նամակի հետ	• Ողջույն ներկա-բացակա • մտագրոհ-նամակ գրի է առնում աշակերտների ասածները	1. Ինչ գիտեք նամակի մասին 2. «Նամակի անցած ճանապարհը» 3. Ուրիշ ինչ պատմություն գիտեք նամակի վերաբերյալ	1 Մտագրոհ
• Ընթացք 20-25րոպե	• Կարդում են տեքստը՝ հետևելով ուղղախոսական կանոնների ն • Բացատրում են անծանոթ բառերը • Գտնում են կոչականները	• հետևում է ճիշտ ընթերցանությանը հարցադրումներով ուղղորդում հատվածի վերարտադրությանը	4. Ինչ են ցույց տալիս տեքստում հայրիկ և աղջիկս բառերը	2 Տարբեր նյութերի համադրում 3 Հարցադրումների մեթոդ

Ավարտ 5ր		Անդրադարձ	1. Լա՞վն էր պատմվածքը 2. Մտածելու տեղիք տվե՞ց 3. Ի՞նչ եզրակացության եկանք	
Տնային աշխատանք 5ր	Տեքստից դուրս գրել կոչականները Բառային աշխատանք			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով

տեղակալ՝ _____

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Ք.Առաքելյան Լիճքի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	15.05.2022	Կիսամյակ	1	Դասարան	5Ա
Թեմա՝	Ռեդյարդ Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»						
Օգտագործվող նյութեր՝	Ստվարաթուղթ, ջրաներկ, մարկերներ						
Դասի նպատակը՝	1 Զարգացնել աշակերտի ստեղծագործական կարողունակությունները 2 Զարգացնել հաղորդակցական կարողունակությունները, բեմական խոսքը 3 Զարգացնել համագործակցային հմտություններ 4 Նախապատրաստվել բեմադրության						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա 1 Դրսևորել հաղորդակցական հմտություններ 2 Ներկայացնել ժամանակաշրջանն ու միջավայրը, ստեղծել համապատասխան միջավայր ու դեկորացիաներ 3 Մտնել դերի մեջ 4 Խոսել բեմից՝ հաղթահարել բեմական խոսքի պայմանականությունները						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն և Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
• Մուտք 3 րոպե • Սկիզբ 5-7րոպե • Ընթացք 6-7 րոպե 20-25 րոպե	• Կարդում են տնային հանձնարարությունը • Ընտրում են իրենց համապատասխան կենտրոնները, կազմում աշխատանքային խմբեր • Աշխատում են կենտրոններում Ստեղծում են բեմական հագուստ Առանձնացնում են հերոսների խոսքերը Կատարում են	• Ողջույն ներկա-բացակա • Հետևում է, ուղղում սխալները • հետևում է խմբերի աշխատանքին, ուղղորդում երեխաներին համապատասխան կենտրոններ, աշխատանքի ժամանակին կատարմանը	1. Ինչպե՞ս կատարել դերաբաշխումը ա)ըստ արտաքինի բ)ըստ բնավորության 2. Հավանել եք հագուստների էսքիզը 3. Ինչ է ցույց տալիս կոչականը 4. Ինչ կետադրություն ունի կոչականը 5. Կոչականի դիրքը նախադասության մեջ	1. Դերային մեթոդ 2. Հարցադրումների մեթոդ 3. Աշխատանք կենտրոններով

• 10 րոպե	դերաբաշխում Ընտրում են համապատասխան երաժշտություն • Տեքստից գտնում են կոչականները, դերերով կարդում են այդ հատվածները			
Տնային աշխատանք 3ր	1. Աշխատել դերերի վրա, անգիր սովորել 2. Պատրաստվել բեմադրության			

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով

տեղակալ՝ _____

Դասապլան 3

Ուսուցիչ՝ Ք.Առաքելյան Լիճքի Հովհ.Թումանյանի անվան միջնակարգ դպրոց

Առարկա՝	Մայրենի	Ամսաթիվ	15.05.2022	Կիսամյակ	1	Դասարան	5Ա
Թեմա՝	Ռեդյարդ Քիփլինգ «Թե ինչպես գրվեց առաջին նամակը»						
Օգտագործվող նյութեր՝	Ստվարաթուղթ, ջրաներկ, մարկերներ, դասագիրք						
Դասի նպատակը՝	1 Հաղթահարել բեմական խոսքի պայմանականությունները 2 Կարողանալ համապատասխանեցնել բեմական խոսքն ու գործողությունը 3 Ճիշտ գնահատել աշխատանքը						
Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ							
Վերջնարդյունքներ	Աշակերտը կկարողանա 1 Հաղթահարել կաշկանդվածությունը 2 Ներկայացնել իր հերոսին 3 Գնահատել և վերլուծել կատարված աշխատանքը						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն Աշակերտներ	Ուսումնական գործունեություն և Ուսուցիչ	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
• 3 րոպե • 5-7րոպե • Ընթացք 20-25 րոպե 7 րոպե	• Մտնում են դահլիճ • Ձևավորում են բեմը • Բեմադրում են պատմվածքը Քննադատները հետևում են ներկայացմանը • Քննադատները ներկայացնում են իրենց դիտարկումները	• Հետևում է, օգնում աշակերտներին ձևավորել բեմը • Հետևում է բեմադրության ընթացքին		1 Դերային մեթոդ 2 Դաս-ներկայացում բեմի վրա			
Տնային աշխատանք 3ր	1 5-6 նախադասությամբ նամակ գրել Թաֆֆիին						

Տնօրենի ուսումնական աշխատանքների գծով

տեղակալ՝ _____

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լևոն Շանթ «Ուսում ու կրթութիւն դպրոցական», Համազգային ընկերության, տպարան, Պեյրութ 1952թ., էջ՝ 43, էջ՝ 48
2. Голубков В.В., методика преподавания литературы. Москва 1962г. Скоткин М.Н., Лернер И.Я., Россиская педагогическая энциклопедия
3 Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Կրթական ծրագրերի կենտրոն, Կրթության ազգային ինստիտուտ, Երևան 2006թ.
4 Հայոց լեզու և գրականություն, Երևան 2008թ.
5 Լուսինե Ալեքսանյան, Խոսքի զարգացում. դերային խաղ, 2021թ.